Հաշվետվություն
ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյանի Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, Ազգանունը

Համբարձում Մաթևոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ Արմավիրի մարզպետ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Արաբական Միացյալ Էմիրություններ (Դուբայ) - 2019 թվականի նոյեմբերի 3-6-ը

4. Հրավիրող կողմը

Արաբական Միացյալ Էմիրություններ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

«Մարդկային ռեսուրսներ» թեմայով համաժողով-ցուցահանդեսին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները

Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում կայացած «Մարդկային ռեսուրսներ» թեմայով համաժողով - ցուցահանդեսի ընթացքում քննարկվել են Արմավիրի մարզի արտադրանքը (կավագործական, տեղական միրգ, չրատեսակներ, ջուր) Արաբական Միացյալ Էմիրություններում ներկայացնելու ու վաճառք կազմակերպելու հնարավորությունները, ինչպես նաև պտղի այգիների, վերամշակման արտադրամասերի հիմնման և արտահանմանն ուղղված բիզնես ծրագրեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Մարդկային ռեսուրսներ» թեմայով համաժողով-ցուցահանդեսի շրջանակներում ունեցել եմ հանդիպումներ գործարարների, ինչպես նաև միջազգային հեղինակավոր ընկերությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես

2019թ. նոյեմբերի 3-ին տեղի է ունեցել ծանոթություն EXPO-ի ներկայացուցիչների հետ,

2019թ. նոյեմբերի 4-ին տեղի է ունեցել հանդիպում LULU INTERNATIONAL կազմակերպության ներկայացուցիչների հետ, որը համարվում է Միջին Արևելքի խոշորագույն կազմակերպությունը առևտրային կենտրոնների քանակով,

2019թ. նոյեմբերի 5-ին տեղի է ունեցել հանդիպում «Carrefour» առևտրային ցանցի ներկայացուցիչների հետ

2019թ. նոյեմբեր 6-ին տեղի է ունեցել հանդիպում Կանադայի և Ուկրաինայի հայ համայնքի գործարար ներկայացուցիչների և գործարար Մուհամմեդ Ալիի հետ:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպումների ընթացքում վերոնշյալ առևտրային ցանցերի հետ քննարկվել են ՀՀ Արմավիրի մարզի արտադրանքը ԱԷՄ-ում ներկայացնելու և վաճառք կազմակերպելու հնարավորությունները. հիմնականում քննարկվել է կավագործական արտադրանքի, տեղական մրգի, չրերի և ջրի վաճառքի մասին:

Մեր հայրենակիցների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են Արմավիրի մարզում պտղատու այգիների, մրգերի վերամշակման արտադրամասերի հիմնման և Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանմանն ուղղված բիզնես ծրագրեր:

Հետաքրքրություն է ցուցաբերվել ավազի վերամշակման արտադրամաս/գործարան հիմնելու ուղղությամբ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Բոլոր կողմերի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել փոխայցելությունների, հատկապես գյուղատնտեսության պոտենցիալի ուսումնասիրությանն ուղղված ճանաչողական այցեր կատարելու ուղղությամբ:

Քննարկվել են համագործակցության հետագա խորացմանը և ամրապնդմանն առնչվող այլ հարցեր:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթևոսյան

X _____

11.11.2019թ.